Հավելված N 2
2025 թվականի հունվարի 16-ին կնքված
«ԴՏԳ-1141-11018/25 ԳՆՍ»

# Դրամաշնորհային հաշվետվություն N_1_

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» |
| Դրամաշնորհի N | «ԴՏԳ-1141-11018/25 ԳՆՍ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01 Հունվար 2025թ. - 31 Դեկտեմբեր 2025թ. |
| Հաշվետու ժամանակահատված | Հունվար-մարտ, 2025թ. |
| Ներկայացման օր | 10.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Ժասմեն Խաչատրյան, ծրագրի ղեկավար |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ` միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Սույն հաշվետվությունն ամփոփում է ս/թ. հունվար – մարտ ժամանակահատվածում «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի կողմից «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները:
Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում կատարված գործողությունները (Գանտի աղյուսակով ներկայացված գործողություններից բացի հաշվետվությունը ներառում է իրականացված այլ գործողություններ):

**Գործողություն 1. Ծրագրի մեկնարկ, շահագրգիռ կողմերի քարտեզագրում, աշխատանքային հանդիպումների իրականացում**

Ծրագրի մեկնարկային փուլում ծրագրի աշխատանքային թիմը՝ ծրագրի ղեկավարի և սոցիալական աշխատողի ներգրավմամբ, կապ է հաստատել տարածաշրջանի բոլոր շահագրգիռ կողմերի հետ , ներկայացվել է ծրագիրը, քննարկվել են համագործակցության շրջանակները: Քարտեզագրվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին և նրանց երեխաներին Սյունիքի մարզում ծառայություններ մատուցող սոցիալական, կրթական, հասարակական և այլ կառույցները: Այժմ «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ն համագործակցում է նշված կառույցների հետ՝

- ՀՀ ԱՍՀՆ Միասնական սոցիալական ծառայության Գորիսի տարածքային կենտրոն,
- Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն,
- Գորիսի, Տաթևի համայնքապետարաններ, մասնավորապես սոցիալական աջակցության բաժին, ԽՀՀ հանձնաժողովներ,
- Հանրակրթական ուսումնական հաստատություններ
- Նախադպրոցական ուսումնական հաստատություններ
- Գորիս քաղաքի բժշկական կենտրոն, մասնավորապես Գորիսի ԲԿ-ի մանկական բաժանմունք և պոլիկլինիկա
- Բնակավայրերի բուժամբուլատորիաներ
- Գորիսի ոստիկանության «Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնությունների կանխարգելման բաժին»:

Շահագրգիռ կողմերի ներգրավումը և նրանց հետ ակտիվ համագործակցությունը շարունակական է: Աշխատանքներ են տարվում ՀՀ Սյունիքի մարզպետարանի Առողջապահության և սոցիալական աջակցության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ մարզի ԿԴԻՀ ընտանիքների հետ աշխատանքներն ավելի առարկայական դարձնելու նպատակով:
Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորում ենք իրականացնել հերթական այցեր միջանկյալ արդյունքների քննարկման և հետագա համատեղ քայլերի իրականացման նպատակով:

**Գործողություն 2. Շահառուների ցանկի ճշգրտում և գրանցում**

Հունվար ամսվա սկզբին «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակում մեկնարկել է աշխատանքը մինչև 18 տարեկան 60 ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների հետ:
Սույն գործողության շրջանակում իրականացվել է երեխաների գրանցումները և ընդունելությունը ցերեկային խնամքի կենտրոնում, ինչպես նաև ներգրավումը արտակենտրոն ծառայությունների մեջ: Մեկնարկել է նաև սոցիալական դեպքերի վարումը կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների հետ:

ԿԴԻՀ և ՀԿԱՐ երեխաներին կենտրոնի աշխատանքներում ընդգրկելու նպատակով կապ է հաստատվել Գորիս և Տաթև համայնքների հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, համայնքային և ՄՍԾ սոցիալական աշխատողների հետ: Վերջիններիս կողմից կատարվել են ուղղորդումներ, իսկ ԳՆՍ ԲՀԿ-ի սոցիալական աշխատողը տնայցեր է իրականացրել հատուկ կարիքներ ունեցող երեխաների ընտանիքներ, ծանոթացել երեխաների խնդիրներին և ուղղորդել նրանց ու ծնողներին օգտվելու կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններից:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրային թիմը՝ ծրագրի ղեկավարի, սոցիալական աշխատողի և հոգեբանի անմիջական ներգրավմամբ, աշխատանքներ է իրականացրել ընտանիքների կարիքների գնահատման և ծրագրում առավել խոցելի ընտանիքների և նրանց երեխաների ներգրավման նպատակով:

Երեխաների գրանցումը կատարվել է կենտրոնում ծնողների կողմից լրացված դիմումների համաձայն: Հունվար-մարտ եռամսյակում ծրագրի շրջանակներում կենտրոնում և արտակենտրոն մատուցվող ծառայություններում ընդգրկվել է ընդհանուր թվով 75 երեխա, որից 60 ԱՍՀՆ-ի, իսկ 15-ը՝ ԳՆՍ ԲՀԿ-ի ֆինանսավորմամբ: Ծառայություն ստացող 75 երեխաներից 6-ը Արցախից բռնի տեղահանված երեխաներ են:

Ըստ ամիսների ծառայություններ ստացողների թիվը հետևյալն է՝

- հունվար՝ 60 ԱՍՀՆ-ի ֆինանսավորմամբ
- փետրվար՝ 60 ԱՍՀՆ-ի և 12 «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի ֆինանսավորմամբ
- մարտ՝ 60 ԱՍՀՆ-ի և 15 «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի ֆինանսավորմամբ

2025թ. մարտի 31-ի դրությամբ ծրագրում ներգրավված է 75 երեխաներին և նրանց ընտանիքներին հաշվետու ժամանակահատվածում մատուցվել են ներքոնշյալ ծառայությունները.

- Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների զարգացման խմբակում ներգրավվել է 75 երեխա:
- Կյանքի հիմնական հմտությունների զարգացման խմբակում ներգրավվել է 75 երեխա
- Լոգոպեդի աջակցություն է ստացել 9 երեխա, որոնք կշարունակեն ծառայությունը ստանալ հաջորդ եռամսյակում:
- Անհատական հոգեբանական աջակցություն է ստացել 11 երեխա:
- Արտթերապիայի խմբային ծառայության մեջ ներգրավվել է թվով 75 երեխա, անհատական 12:
- Քաղաքացիական կրթության խմբակում ներգրավվել է 16 երեխա:
- Մեդիագրագիտության խմբակում ներգրավվել է 16 երեխա:
- Մասնագիտական կողմնորոշման խմբակում ներգրավվել է 41 երեխա:
- Սոցիալական աշխատանք է տարվել երեխային շուրջօրյա խնամք տրամադրող 4 կազմակերպությունների հետ:
- Սոցիալական դեպքի վարում է իրականացվել 2 ընտանիքների թվով 6 երեխաների հետ:

Հաջորդ եռամսյակում կշարունակվեն Սյունիքի մարզի այլ բնակավայրերից շահառու ընտանիքների բացահայտումը և նրանց ներառումը ծրագրի կողմից մատուցվող կարիքահենն ծառայություններում:

**Գործողություն 3. Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում, առաջնահերթությունների սահմանում, մեթոդաբանությունների և գործիքակազմի մշակում, երեխաների և ընտանիքների ներառում մատուցվող ծառայություններում**

Երեխաների գնահատումն իրականացվել է պետության կողմից հաստատված ԿԴԻԳ հարցաթերթի միջոցով: Շահառուների գնահատումը և ծառայությունների մեջ նրանց ներգրավումը իրականացվել է համայնքային սոցիալական աշխատողների, ՄՍԾ կառույցի և

այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ ապահովելու ավելի մեծ թվով շահառուների ներգրավում և կարիքի վրա հիմնված գնահատում, կազմվել համապատասխան թեմատիկ պլաններն ու աշխատանքային գրաֆիկները:
Պատրաստվել են շահառուների անհատական փաթեթները, որը ներառում է՝

- Ներքին վերգիր
- Ծնողի/խնամակալի դիմում
- Երեխայի հաշվառման թերթիկ
- Հրաման
- ԿԴԻԳ
- Անհատական զարգացման ծրագիր
- Խմբավարի դիտարկման թերթիկ
- Օրագիր
- Ռիսկերի գնահատման թերթիկ
- Ծնողի համաձայնագիր ծառայությունների տրամադրելու վերաբերյալ
- Ծնողի համաձայնագիրը սննդի վերաբերյալ
- Երեխայի հաշմանդամության թուղթ/առկայության դեպքում/
- ՏՄԱԿ-ի վկայագիր կամ եզրակացություն /առկայության դեպքում/
- Երեխայի հիվանդությունների վերաբերյալ էպիկրիզներ/առկայության դեպքում/

Երեխաների կարիքների գնահատումն իրականացվել է սոցիալական աշխատողի կողմից՝ կենտրոնի հոգեբանի, արտթերապևտի, լոգոպեդի, խմբակավարի հետ համագործակցաբար:
Կարիքների գնահատման ընթացքում սոցիալական աշխատողի և ծրագրի ղեկավարի կողմից իրականացվել են տնայցեր:
Կարիքների գնահատման արդյունքում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնի մասնագիտական թիմի կողմից մշակվել են երեխաների՝ կարիքից բխող ծառայությունները, երեխաների շրջանում բացահայտված հիմնական կարիքներն ու դժվարություններն են՝

- Հոգեբանական խնդիրներ, մասնավորապես Արցախից բռնի տեղահանված երեխաների շրջանում
- Խոսքի և հաղորդակցման հետ կապված դժվարություններ
- Ուշադրության կենտրոնացման դժվարություններ
- Մանր մոտորիկայի հետ կապված դժվարություններ
- Վարքային խնդիրներ
- Մեդիա գրագիտության պակաս
- Ոչ ֆորմալ կրթության պակաս
- Հաղորդակցման հմտությունների պակաս
- Սովորելու հետ կապված դժվարություններ
- Մասնագիտական կողմնորոշման բացակայություն
- Համայնքային միջոցառումների մեջ ներգրավված լինելու հնարավորության բացակայություն

Ընտանիքների շրջանում բացահայտված հիմնական կարիքներն ու դժվարություններն են՝

- Կենցաղավարման հմտությունների պակաս ծնողների շրջանում
- Ֆինանսական գրագիտության պակաս ծնողների շրջանում

- Ծնողավարման հմտությունների պակաս ծնողների շրջանում
- Իրավաբանական հարցերի շուրջ գրագիտության պակաս
- Ներառականության վերաբերյալ գիտելիքների պակաս

**Գործողություն 4. Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում կենտրոնում**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի մասնագիտական թիմի կողմից մատուցվել են ծրագրով սահմանված ծառայությունները: Մեկնարկային փուլում մասնագետները ձևավորել են իրենց շահառուների խմբերը, կազմել են գործողությունների օրացուցային պլանները, թեմատիկ պլանները, խմբերի հաճախումների և մասնագետների արտակենտրոն այցերի ժամանակացույցը:
Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում և արտակենտրոն մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- ✓ Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների զարգացման
- ✓ Կյանքի հմտությունների զարգացման,
- ✓ Լոգոպեդի ,
- ✓ Արտթերապևտիկ
- ✓ Մասնագիտական կողմնորոշման
- ✓ Հոգեբանի ,
- ✓ Մեդիագրագիտության, անձի զարգացման և քաղաքացիական կրթության
- ✓ Սոցիալական աշխատողի մասնագիտական ծառայություն, սոցիալական դեպքերի վարում ընտանիքների հետ

**Գործողություն 5. Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացման խմբակների իրականացում**

Կենտրոնում գրանցված 75 երեխա ներգարվվել է սոցիալ-հոգեբանական և կյանքի հմտությունների զարգացման խմբակներում: Ձևավորվել են 3 տարիքային խմբեր՝ կրտսեր, միջին և ավագ: Այս ծառայությունը երեխաները ստանում են կենտրոնում՝ Գորիսում և արտակենտրոն՝ Շինուհայրի դպրոցում՝ ԳՆՄ ԲՀԿ-ի կողմից համապատասխան գույքով և դիդակտիկ զարգացնող նյութերով ձևավորված սենյակներում: Պարապմունքները տեղի են ունեցել դասերից հետո՝ 13:30-17:30-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր պարապմունքի տևողությունը 1,5 ժամ է: Կենտրոն յուրաքանչյուր երեխա այցելել է շաբաթական 2-3 անգամ:
Ամենօրյա պարապմունքներն իրականացվել են ըստ յուրաքանչյուր ամսվա համար կազմված թեմատիկ պլանների և ժամանակացույցի, որոնք բխում են ԱԶԾ-ում նշված կարիքներից և մասնագետների ամենօրյա դիտարկումներից ու գնահատումներից:
Ամենօրյա պարապմունքներն ուղղված են երեխաների մոտ՝

- Ուշադրության կենտրոնացմանը,
- Երևակայության զարգացմանը,
- Ինքնաճանաչման հմտությունների ձևավորմանը,
- Սոցիալական հմտությունների զարգացմանը,
- Շփման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը,
- Կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- Յանկալի վարքի դրսևորմանը,
- Աշխարհաճանաչողության զարգացմանը:

**Գործողություն 6. Լոգոպեդական ծառայության մատուցում**

Լոգոպեդական ծառայությունը մատուցվում է հունվարից: Հաշվետու ժամանակահատվածում լոգոպեդի մասնագիտացված ծառայության մեջ ներգրավվել է թվով 9 երեխա:

Լոգոպեդական աշխատանքն ուղղված է խոսքի ընդհանուր թերզարգացվածություն, բառապաշարի հապաղում և հնչյունաարտաբերական խնդիրներ ունեցող երեխաների խնդիրների շտկմանը: Ծառայության մեջ ներգրավված յուրաքանչյուր երեխա ծառայություն է ստանում շաբաթական 2 անգամ, ըստ կարիքի՝ 30 րոպեից մինչև 45 րոպե տևողությամբ:

Հոգեբանական ծառայություն ստացող բոլոր երեխաները միաժամանակ ներգրավված են նաև այլ ծառայություններում՝ կյանքի հմտությունների զարգացման խմբակներ, հոգեբանական աջակցության, արտթերապիա, առավել բարձր արդյունք ստանալու համար:

**Գործողություն 7. Մասնագիտական կողմնորոշման խմբակների իրականացում**

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների համար կազմակերպվել են այցելություններ վարսավիրանոց, հացի փուռ, Գորիսի արվեստի դպրոց, Գորիսի պատկերասրահ , որտեղ երեխաները ծանոթացել են արվեստի տարբեր ճյուղերին: Երեխաների մեծ հետաքրքրության և ոգևորվածության պատճառով ձեռք է բերվել պայմանավորվածություն վարպետաց դասեր կազմակերպելու և անցկացնելու համար:

**Գործողություն 8. Արտթերապևտիկ ծառայությունների իրականացում**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն հաճախող երեխաները ներգարվվել են արտթերապևտիկ պարապմունքներում: Ծառայությունն ուղղված է երեխաների հուզական կայունության ձևավորմանը, մանր ու խոշոր մոտորիկայի զարգացմանը, երեխաների ուժեղ կողմերի վերհանմանն ու զարգացմանը: Հաշվետու ժամանակահատվածում արտթերապևտիկ պարապմունքներ են իրականացվել թվով 75 երեխաների հետ՝ խմբային և 12 անհատական: Պարապմունքներն անց են կացվել խմբային և անհատական տարբերակներով:

**Գործողություն 9. Անձի զարգացում (քաղաքացիական կրթության,մեդիագրագիտության և այլ պարապմունքների միջոցով)**

Արտակենտրոն տարբերակով իրականացվել են անձի զարգացմանը, քաղաքացիական կրթությանն ու մեդիագրագիտությանն ուղղված պարապմունքները: Դրանք իրականացվում են խմբակավարի, սոցիալական աշխատողի կողմից:

**Գործողություն 10. Անհատական և խմբային հոգեբանական ծառայություն**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի հոգեբանի կողմից տարվել է խմբային և անհատական հոգեբանական աջակցություն կենտրոնի երեխաների հետ:
Խմբային աջակցություն են ստացել 75 երեխա, որից 11-ը նաև ստացել են անհատական:
Հոգեբանական աշխատանքը ներառել է հետևյալ բաղադրիչները՝

- Հոգեբանական կարիքների առաջնային գնահատում,
- Հոգեբանական շարունակական աշխատանք,
- Հոգեբանական խորհրդատվություն,
- Իրազեկման հանդիպումներ:

Հոգեբանական ծառայության մեջ ներգրավված երեխաները ունեն հետևյալ հիմնական կարիքները և խնդիրները՝

- Վարքային խնդիրներ
- Հուզակամային ոլորտի խնդիրներ
- Վախեր, խորը անհանգստություն
- Ինտելեկտուալ ոլորտի խնդիրներ
- Շփման դժվարություններ
- Մանր և խոշոր մոտորիկայի հետ կապված խնդիրներ

Ցերեկային կենտրոնում և արտակենտրոն հոգեբանական անհատական պարապմունքներն անց են կացվում հարմարեցված ու ռեսուրսներով հագեցած սենյակներում: Խմբային պարապմունքները զուգակցվում են կյանքի հմտությունների զարգացման խմբակների, արտթերապևտիկ պարապմունքների կամ այլ հանդիպումների հետ:
Հոգեբանական ծառայության տրամադրման աշխատանքը կշարունակվի նաև հաջորդ եռամսյակում:

**Գործողություն 11. Սոցիալական աշխատանք ընտանիքների հետ**

Հունվար-մարտ եռամսյակի ընթացքում կենտրոնի սոցիալական աշխատողը սոցիալական աշխատանք է իրականացրել կենտրոն հաճախող երեխաների ընտանիքների հետ:
Ընտանիքների հետ իրականացված սոցիալական աշխատանքը ներառում է՝

- ✓ Կարիքի գնահատում,
- ✓ Սոցիալական դեպքերի վարում,
- ✓ Ուղղորդումներ,
- ✓ Խորհրդատվություն

Երեխաների և նրանց ընտանիքների կարիքի գնահատումն իրականացվել է ԿԴԻԳ հարցաթերթով հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայություններում ներգրավված բոլոր ընտանիքների հետ:
Ընտանիքների կարիքների գնահատման արդյունքների հիման վրա բացվել և վարվում են սոցիալական դեպքեր: Հաշվետու ժամանակահատվածում բացվել և վարվում է 2 ընտանիքի սոցիալական դեպք, որում ներգրավված են 6 երեխաներ՝

- Սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիք (4 երեխա):
- Հաշմանդամություն ունեցող երեխա (2 երեխա):

Երկու դեպքերի վարումն ընթացքի մեջ է:
Սոցիալական աշխատողի և ծրագրի ղեկավարի կողմից շահառուներն ուղղորդվել են տարբեր կառույցներ անհրաժեշտ ծառայություններ ստանալու համար: Հաշվետու եռամսյակում իրականացվել է ընդհանուր թվով 13 ուղղորդումներ տարբեր կառույցներ: Ուղղորդումների արդյունքում՝

- 4 ընտանիք անապահովության նպաստի համար դիմել են ՄՍԾ
- Բժշկական անվճար հետազոտություն է ստացել 5 ընտանիք՝ հայ-ֆրանսիական կենտրոնի կողմից Գորիսում: Ունենք պայմանավորվածություն հաջորդ եռամսյակում հետազոտություններ իրականացնել Տաթև համայնքի շահառուների համար:
- 4 ընտանիք գրանցվել են «Կարիտաս» բարեսիրական կազմակերպությունում:

**Գործողություն 12. Սոցիալական աշխատանք խնամքի հաստատությունների հետ**
Ծրագրի ղեկավարը մարտ ամսին ճանաչողական այց է ունեցել Գյումրու «Մանկան տուն» ՊՈԱԿ: Կնքվել են համաձայնագրեր Գյումրու «Մանկան տուն» և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ներ և ԳՆՍ ԲՀԿ-ի միջև անչափահաս շահառուների անձնական տվյալների փոխանակման և այդ տվյալների գաղտնիության պահպանման մասին: Այդ երկու ՊՈԱԿ-ները ընտանիքների վերամիավորման նպատակով շահառուների/ երեք երեխայի/ մասին տեղեկատվություն են տրամադրվել ԳՆՍ ԲՀԿ-ին: Այս պահին 1 ընտանիքի հետ դուրս ենք եկել կապի և աշխատանքներ ենք փորձում իրականացնել:
Առցանց հարցումներ են արվել նաև «Երևանի «Մանկան տուն» և «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ներին: «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ից ստացել ենք պատասխան, որ Սյունիքի մարզն ընդգրկող երեխաների տվյալներ առկա չեն: Մյուս՝ «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ից սպասում ենք պատասխանի:

**Գործողություն 13. Երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացնե**

Երեխաների հետ երեխայի իրավունքների վերաբերյալ պարբերաբար դասընթացներ են կազմակերպվել քաղաքացիական կրթության և կյանքի հմտությունների խմբակներում: Ծնողների հետ դասընթացները կմեկնարկեն երկրորդ եռամսյակից:

**Գործողություն 14. Իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ**

Մարտ ամսից սոցիալական աշխատողի և ծրագրի ղեկավարի կողմից իրավաբանական խորհրդատվության տրամադրման նպատակով հավաքագրվում են իրավաբանական բնույթ կրող հարցերը:

**Իրավաբանական խորհրդատվության անհրաժեշտություն ունեցող հարցերը վերաբերել են հետևյալ հիմնական խնդիրներին՝**

- ✓ Անապահովության նպաստների հարթակում գրանցվելու և շահառու ընդգրկվելու
- ✓ Հաշմանդամության կարգ ձեռք բերելու
- ✓ Վարկային իրավահարաբերության,
- ✓ Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման,

***Գործողություն 15. Սննդային փաթեթի տրամադրում***

Հունվարից կենտրոն հաճախող բոլոր երեխաներին տրամադրվում է սննդային փաթեթ: Սննդային փաթեթի մատակարարների ընտրության համար, «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ն Գնումների ընթացակարգերով, պատրաստել և տարածել է հայտարարություններ, ընտրվել են մատակարարները, կնքվել են պայմանագրեր, ըստ ժամանակացույցի՝ կատարվում է մատակարարումը:
Սննդային փաթեթի մեջ ներառված է՝ Սառը թեյ, «Չոկո-պայ», «Տրանչետտո» թխվածք, «Սմայլիկ» կեքսիկ, բուլկի: Կազմակերպության համապատասխան անդամի կողմից կազմակերպվում է սննդի ձեռքբերման և բաշխման գործընթացը՝ ըստ ժամանակացույցի և երեխաների հաճախումների գրաֆիկի: Ծրագրի ղեկավարը հետևում է սննդի բաշխմանն ու պահեստին:

***Գործողություն 16. «ՄԱՆՈՒԿ» բազայում երեխաների տվյալների մուտքագրման աշխատանքներ***

Մարտ ամսվա կեսերից համապատասխան մասնագետները սկսել են «ՄԱՆՈՒԿ» տեղեկատվական բազայում շահառու երեխաների տվյալների մուտքագրման աշխատանքները: Տվյալների մուտքագրման ընթացքում մասնագետները, սերտ կապ են ապահովել Նորք կենտրոնի կողմից վերապատրաստող մասնագետի հետ՝ ծագած տեխնիկական խնդիրներին լուծում տալու, խորհրդատվության համար : Մարտի 31-ի դրությամբ ՄԱՆՈՒԿ տեղեկատվական բազա է մուտքագրվել շահառու երեխաների տվյալներ: Թվով 9 երեխայի անհատական գործը բազայում մուտքագրել:

**Գործողություն 16. Կենտրոնի ծառայությունների անանուն գնահատում շահառուների շրջանում**

Կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման նպատակով մշակվել է հարցաշար, որով ծրագրի ղեկավարը հեռախոսազանգերի միջոցով կատարում է հարցումներ: Հարցումների պատասխանները գտնվում են վերլուծության փուլում: Ծառայությունների որակի բարելավման նպատակով հարցումների առաջարկությունների բաժնից առաջնահերթ հանվում են առաջարկությունները և դիտողությունները, փոխանցվում են մասնագետներին:
Մշակվում են նաև այլ գործիքներ, որոնցով հաջորդ եռամսյակից կկատարվեն անանուն

հարցումները:
Ծնողները հիմնականում հայտնում են իրենց գոհունակությունը ծառայությունների վերաբերյալ:

***Գործողություն 17. Համայնքային միջոցառումների կազմակերպում շահառու երեխաների մասնակցությամբ***
Հաշվետու եռամսյակում կենտրոն հաճախող և տարբեր ծառայություններում ներգրավված երեխաները մասնակցել են համայնքային միջոցառումներին, որոնք կազմակերպվել են թե՛ Գորիսի և Տաթևի համայնքապետարանների կողմից, թե՛ ԳՆՍ ԲՀԿ-ի կողմից՝ Տաթևի համայնքապետարանի աջակցությամբ (տրանսպորտի տրամադրում): Ստորև նշված են սույն գործողության շրջանակում իրականացված միջոցառումները.

- ✓ **Բանակի տոն** – Հունվարի 28, թեմատիկ դաս-միջոցառում,
- ✓ **Տրնդեզ** – Փետրվարի 13
- ✓ **Գիրք նվիրելու օր/Թումանյանական օրերի շարք** – Փետրվարի 19-25, Բաց դաս, այցելություն Գորիսի համայնքային գրադարան, ընթերցանություն
- ✓ **Մայրենի լեզվի օր** – Փետրվարի 21
- ✓ **Գարնանամուտ** – Նախագծային աշխատանք, ներկայացման դաս
- ✓ **Մարտի 8-ապրիլի 7** – Մայրության և գեղեցկության տոնին նվիրված բազմաբնույթ միջոցառումներ:

Պարբերաբար կազմակերպվել են այցելություններ Գորիսի մշակութային օջախներ:

***Գործողություն 18. Շարունակական մոնիտորինգ, արդյունքների ամփոփում***
Ծրագրի ղեկավարի կողմից շարունակաբար իրականացվում է մոնիտորինգ և ձեռքբերված միջանկյալ արդյունքների քննարկում: Մոնիտորինգի արդյունքում վեր են հանվում առաջնային լուծում պահանջող խնդիրները, սահմանվում են գործողությունները:

***Գործողություն 19. Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում***
Սկսած հունվար ամսվանից ծրագրային թիմի կողմից պատրաստվում և ԱՄՀՆ-ին է ներկայացվում համապատասխան ծրագրային ու ֆինանսական հաշվետվությունները: Հունվար և փետրվար ամիսների ընթացքում ներկայացվել են տվյալ ամսվա դրությամբ ծառայություն ստացող երեխաների Շահառուների բազան և ֆինանսական հաշվետվության հավելվածները: Իսկ եռամսյակի ավարտին ներկայացվում է Շահառուների բազան, Ծրագրային եռամսյակային և ֆինանսական հաշվետվությունները:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (*<u>Գանտի աղյուսակ</u>*) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու եռամսյակում իրականացվել են ծրագրի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր գործողությունները: Այդ գործողությունների մեծ մասը ենթադրում է շարունակական աշխատանք և գտնվում է իրականացման ընթացքի մեջ:
**Հաշվետու ժամանակահատվածի միջանկյալ արդյունքներն են՝**

- ✓ Մասնագիտական թիմի ձևավորում
- ✓ Շահառուների ներգրավում
- ✓ Շահառուների կարիքների գնահատում,
- ✓ Բացահայտված կարիքների վրա հիմնված ծառայությունների փաթեթի մշակում
- ✓ Հատուկ կարիքներ ունեցող երեխաներին նեղ մասնագիտական ծառայությունների

մատուցում,

- ✓ Հատուկ կարիքներ ունեցող երեխաների ներառում խմբերում
- ✓ Կարիքից բխող մասնագիտացված ծառայությունների տրամադրում,
- ✓ Թեմատիկ պարապմունքների իրականացում,
- ✓ Սոցիալ-հոգեբանական աջակցությունների տրամադրում,
- ✓ Շահառուների կյանքի բարելավում, ընտանիքում դրական փոփոխություն
- ✓ Երեխաների մոտ վարքային խնդիրների շտկում, հաղորդակցման հմտությունների զարգացում,
- ✓ Համայնքային միջոցառումների կազմակերպման ու իրականացման մեջ ակտիվ ներգրավածություն
- ✓ Մասնագիտական թիմի կարողությունների զարգացում
- ✓ Անձի զարգացում (քաղաքացիական կրթության,մեդիագրագիտության և այլ պարապմունքների միջոցով)

- ✓ Մասնագիտական կողմնորոշման խմբակ

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել է ծրագրի մեկնարկի և կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղադրվել է շարունակաբար թարմացվող տեղեկատվություն «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի ֆեյսբուքյան էջում: https://www.facebook.com/profile.php?id=61564481887498

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում հիմնական դժվարությունները կապված էին Տաթև համայնքի Խոտ և Հալիձոր բնակավայրերում հայտնաբերված ԿԴԻՀ երեխաներին արտակենտրոն ծառայություններ տրամադրելու հետ կապված, քանի որ Տաթևի համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքներում ջեռուցման խնդիր ունեինք: Նշված համայնքներում արդեն երկրորդ եռամսյակից կսկսենք արտակենտրոն ծառայությունների մատուցումը:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամսյակում իրականացվելիք գործողություններն են՝

- ✓ Նոր ընդգրկվող շահառուների կարիքների և կարողությունների գնահատում
- ✓ Շահառուների անհատական զարգացման ծրագրերի կազմում
- ✓ Երեխաների տվյալների մուտքագրում ՄԱՆՈՒԿ տեղեկատվական բազայում
- ✓ Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում կենտրոնում և արտակենտրոն
- ✓ Կյանքի հմտությունների ամենօրյա պարապմունքների իրականացում
- ✓ Մասնագիտական կողմնորոշման պարապմունքների իրականացում, համապատասխան նյութերի ձեռք բերում և տրամադրում
- ✓ Անձի զարգացման, մեդիագրագիտության և քաղաքացիական կրթության

պարապմունքները իրականացում

- ✓ Լոգոպեդական ծառայությունների տրամադրում
- ✓ Հոգեբանական անհատական և խմբային ծառայությունների տրամադրում
- ✓ Արտթերապևտիկ պարապմունքների իրականացում
- ✓ Արտակենտրոն ծառայությունների տրամադրում՝ սոցիալական աշխատանք ընտանիքների հետ, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշման խմբակներ
- ✓ Սոցիալական աշխատանք ընտանիքների հետ, դեպքերի վարում
- ✓ Սոցիալական աշխատանք հատուկ հաստատությունների հետ
- ✓ Դրական ծնողավարման դասընթացների իրականացում
- ✓ Իրավաբանական խորհրդատվության իրականացում
- ✓ Համայնքային միջոցառումների կազմակերպում
- ✓ Ճանաչողական արշավների և էքսկուրսիաների իրականացում
- ✓ Աշխատանքային թիմի ներգրավում կարողությունների զարգացման դասընթացներին,
- ✓ Շահառուների կողմից ծառայությունների անանուն գնահատման գործընթացի կազմակերպում
- ✓ Շահագրգիռ կողմերի հետ ակտիվ համագործակցություն, նոր գործընկերների ներգրավում
- ✓ Շարունակական մոնիթորինգ և արդյունքների ամփոփում
- ✓ Շահառուների բազայի պատրաստում, ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար։**

***Գործողություն 1. Համագործակցության ձևավորում հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ***

«Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի թիմը պարբերաբար այցելություններ է իրականացրել Տաթև Գորիս համայնքների հանրակրթական ուսումնական հաստատություններ, հանդիպումներ են տեղի ունեցել տնօրենների և ՄԿԱ փոխտնօրենների հետ։ Հանդիպումների նպատակը ՀՀ ԱՍՀՆ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանրակրթական դպրոցների հետ համագործակցության հնարավորությունների քննարկումն էր, կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ դպրոցների ուսուցիչներին, աշակերտներին և ծնողներին իրազեկելը՝ երեխաների բացահայտման, ծառայություններում ներգրավման, ինչպես նաև համայնքային համատեղ միջոցառումների կազմակերպման ակնկալիքով։
Դպրոցները պատրաստակամություն են հայտնել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներին և նրանց ծնողներին ուղղորդել օգտվելու կենտրոնի ծառայություններից։

***Գործողություն 2. Համագործակցության շարունակություն դոնոր և գործընկեր կառույցների հետ***

Հաշվետու ժամանակահատվածում «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ն համագործակցության առաջարկություններով հանդիպել է մի շարք կազմակերպությունների հետ, մասնավորապես պայմանավորվածություն է ձեռք բերվել «Սանտե Արմենիա» կազմակերպության հետ և առաջիկայում կկազմակերպվի մնացած շահառու ընտանիքների սիրտ-անոթային ախտորոշիչ ծառայությունների տրամադրում։

***Գործողություն 3. Աշխատանքային հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ***
Հաշվետու ժամանակահատվածում «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ն շարունակել է աշխատանքային հանդիպումները շահագրգիռ կողմերի հետ համայնքային սոցիալական աշխատող, Գորիսի ՄՍԾ բաժին, դպրոցներ, ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող կառույցի աշխատակիցներ: Աշխատանքային հանդիպումների ընթացքում կազմվել են համատեղ գործողությունների պլաններ այն ընտանիքների համար, որոնց դեպքում վարվում են սոցիալական դեպքեր:

***Գործողություն 4. Աշխատանքային թիմի կարողությունների զարգացում***
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի մասնագիտական թիմը պարբերաբար ներգրավվել է մասնագիտական կարողությունների զարգացման տարբեր դասընթացներում: Կարիտաս կազմակերպության կողմից պարբերաբար դասընթացներ և խորհրդատվություններ է կազմակերպվել «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի աշխատակազմի և մասնագետների համար:
Փորձի փոխանակման նպատակով այցելություններ ենք իրականացրել Արտաշատի «Փոքրիկ Իշխան», Գյումրու «Էմիլի-Արեգակ» մանկական կենտրոններ:

**Գործողություն 5. ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ Գորիսի ՏԿ-ի կողմից Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի տրամադրում**
ՄՍԾ Գորիսի ՏԿ-ում ծրագրի ղեկավարի և սոցիալական աշխատողի կողմից կազմակերպվել է տեղեկատվական հանդիպումներ «Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ-ի կողմից տարածաշրջանում իրականացվող ԿԴԻՀ անձանց հետ տարվող ծրագրերի և աշխատանքների մասին: Տեղեկատվական հանդիպումների արդյունքում ԱՍՀՆ ՄՍԾ Գորիսի ՏԿ-ի կողմից Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագիր է տրամադրվել կազմակերպությանը, որն առավել արդյունավետ և համակարգված է դարձրել կազմակերպության և ՄՍԾ Գորիսի ՏԿ-ի համագործակցությամբ տարվող աշխատանքները, մասնավորապես՝ ԿԴԻՀ ընտանքների սոցիալական դեպքերի վարման համատեղ քայլերի իրականացման համար, ՄՍԾ Գորիսի ՏԿ-ի կողմից պարբերաբար կատարվում է ուղղորդումներ ԿԴԻՀ ընտանիքների և երեխաների վերաբերյալ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Գորիսի նոր սերունդ» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Գլխավոր քարտուղար Ս. Մուրադյան | Նախագահ Ժասմեն Խաչատրյան |
| ----------(ստորագրություն) | ----------(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |